



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՆՆ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 18-08/2-31750

30 05 2014 թ.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՄԱԿԱՐԳՈՂ
ՏԻԿԻՆ Ս.ԱՅՎԱԶՅԱՆԻՆ
/ք. Երևան, Չարենցի 46, հեռ. 551364/

0025

Հարգելի տիկին Այվազյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետարանի հասցեագրած Ձեր 26.05.2014թ. հ. ԵՕԿ_14/09 գրության՝ տրամադրում ենք Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ազատության պող. հ. 2/2 հասցեում <Գոլդեն Փելիս> հյուրանոցային համալիրի 4-րդ մասնաշենքի կառուցման համար տրված 05.11.2013թ. հ. 01/18-07/2-55351-916 ճարտարապետահատագծային ստաջադրանքի, <Արտագերատեսչական փորձաքննություն> ՓԲԸ-ի կողմից 14.04.2014թ տրված հ. 14-177 փորձաքննության եզրակացության, շինարարական աշխատանքների իրականացման 18.04.2014թ. հ. 01/18-23916-370 շինարարության թույլտվության, ինչպես նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի 07.05.2014թ. հ. 740432 31/01-1/655 գրության լուսապատճենները:

Առդիր՝ 7 թերթ:

Աշխատակազմի ճարտարապետության
և քաղաքաշինության վարչության պետ

Ա.Քասարյան

Կատ. Սվ. Հարությունյան
514274

Կա «Գոյդեն Փեյիս» հյուրանոցային համալիրի 4-րդ մասնաշենքի կառուցման
 (կառուցում, վերակառուցում, սեփականում, կազմակերպում, վերականգնում, և այլն, օբյեկտի անվանումը, նակիրը բնորոշումը, եզրույթումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))
աշխատանքային մախսագծային փաստաթղթերի մշակման համար
 (մախսագծման փուլերը)

Հասցե **Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Ազատության պող. հ. 2/2**

Կառուցապատող «Գոյդեն Փեյիս» հյուրանոց ՍՊ ընկերություն
 (կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, նույնիստանումը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմք **Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 13.06.2006թ. հ. 2090402 վկայականը, էսքիզային նախագիծը:**
 (կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվող տրամադրման, անշարժ գույքի փոխանման, քաղաքաշինական աշխատանքների կատարման հետ առնչվող անբաժնետիրական փաստաթղթեր)

Ն Ա Ն Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Մ Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է **Հասարակական կառուցապատման գոտում**
 (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը **1,70776 հա**
 (հողամասի սահմանները՝ կորդինատային նշանակմամբ, մակերեսը, (հա))

3. Հողամասի ակադիմակը **Հյուրանոցային համալիրի էսենտիալ գտնվող կառուցապատումից ազատ տարածք**
 (ռեյնի քանակը, շենքերի (այդ թվում՝ քանդակների) արկայությունը (օգտագործումը, մշակութային, հարկային, շինարարական կայքերը և այլն), կամայությունը, քարակազմակերպումը և այլն)

4. (*) Տրամադրության պայմանները **Ազատության պողոտա**
 (ճանապարհների ակադիմայությունը, կրկնապային տրամադրումը մասնագումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ **Նախագծվող է կից տարածքներում անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա**
 (բնակարանային, արտադրական, կառուցվածքային ցանցերի, ինժեներական ենթակառուցվածքների, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր **Ազատության պողոտա, «Հնարանի» գրասյուզի**
 (կից հողատիրույթների անվանումը և դրանց սահմանները՝ համապատասխան ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող (կամ) պատմամշակութային արժանատիների տարածքներ (պահպանական գոտիներ)
 (հաշարման անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանադրվածներ
 (տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Ն Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

3. Ճարտարապետանաստակագծային պահանջներ **Մշակել Ազատության պող. հ. 2/2 հասցեում «Գոյդեն Փեյիս» հյուրանոցային համալիրի 4-րդ մասնաշենքի նախագիծ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 13.06.2006թ. հ. 2090402 վկայականով ամրագրված հողատարածքի սահմաններում:**
 (վերլուծ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նորմատիվաօրենսդրական փաստաթղթերի պահանջներից, անկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պահանջներից կամ դրանց քաղաքաշինական միջավայրի պահանջներից)

9.1. (*) Օբյեկտի հետադիմությունը կարմիր գծից (մետր) _____

9.2. (*) հեռավորությունը հարևան հողատիրույթներից (օբյեկտներից) (մետր) _____

9.3. Թույլատրելի քարճրությունը **Մինչև 31,0 մ**

9.4. կառուցապատման հատուկ գործակիցը _____
 (կառուցի (կառուցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը կառուցման մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը **Մինչև 50 % (ներառյալ գոյություն ունեցող հատվածը)**
 (կառուցապատվող (սմբռանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.6. կամայատրաման տոկոսը **50 % և ավել**
 (կամայատրամ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.7. այլ պահանջներ

- Մշակել մեկ ստորգետնյա և 9 վերգետնյա հարկերով հյուրանոցային մասնաշենքի նախագիծ:
- Հյուրանոցի 4-րդ մասնաշենքը նախագիծ գոյություն ունեցող մասնաշենքերին կից կոնստրուկտիվ համակարգով, որպես ինքնուրույն կառույց, որը միջանցքներով կապ կունենան սնտրուկտիվ հետ:
- Հյուրանոցային համալիրի մասնակառուցումը պահպանելու համար երկ մասնաշենքեր երեսուցասուր հույն քարատեսակով:
- Նախագիծով մասնաշենքերին կից նախատեսված քաղաքային ավտոկայանատեղեր:
- Տանիքը նախատեսվել հարթ՝ հենարաններ է շահագործվող, ջրաներացումը կազմակերպված:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդում կամ տեղափոխում պայմանները և աշխատանքների հերթականությունը **Ապամոնտաժել գոյություն ունեցող մասնաշենքի ետևամասում առկա լողավազանի հատվածը:**

11. Ստորգեղանյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները **Ստորգեղանյա հարկում նախատեսել ավտոկայանատեղեր, տխնիկակ տնտեսական սենքեր:**

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ **Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ Միացնել գոյություն ունեցող ինժեներական գծերին և հաղորդակցողիներին:**

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում **"Երևան ջուր" ՓԲԸ**

12.2. (*) էլեկտրամատակարարում **"Հայաստանի էլեկտրացանցեր" ՓԲԸ**

12.3. (*) գազամատակարարում **"Հայուսգազարդ" ՓԲԸ (անհրաժեշտության դեպքում)**

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կապուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրը **---**

12.5. քույլ հոսանքներ **---**

12.6. արդենանություն **---**

13. Տարածքի ինժեներական մախապատրաստում **Կազմակերպել տարածքի ջրահեռացում:**

14. Բարեկարգում **Հարակից տարածքը բարեկարգել:**

15. Ծինարարական մյուսեր **Երկաթբետոն, մետաղ, ապակի, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, բարձրորակ սվաղ, էրեսապատման բարձրորակ նյութեր:**

16. Պաշտպանական կառույցներ **Նախատեսել արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:**

17. Հակահրդեհային պահանջներ **Ապահովել իրավիճակներում ճարգիված օբյեկտների պաշտպանության միջոցառումներ:**

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ **Ապահովել հաշմանդամների և սակավաշարժ խմբերի տեղափոխման ետրմատիվային անհրաժեշտ պայմաններ:**

19. Երջակա միջավայրի պահպանում **Ապահովել ջրջակա միջավայրի պահպանման միջոցառումներ:**

20. Ծինարարության կազմակերպում **- Մշակել շինարարական երապարակի կազմակերպման նախագիծ՝ եկտտի ունենալով ետտ Երևան քաղաքի ավազանու 16.03. 2012թ. N 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:
- Կազմել շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց:**

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը **Երկու տարի**

(Հշվում նև առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը՝ 22 կառավարության 1998թ. դեկտեմբերի 12-ի հ.812 որոշման N 1 հավելվածի 6-րդ կետին համապատասխան)

Լ Ը Ա Յ Ո Ւ Յ Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ **22 կառավարության 06.05.2010թ. հ.711-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի» համաձայն:**

23. Միջանկյալ համաձայնեցում **Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին:**

24. Հասարակական քննարկումներ **---**

25. Համաձայնեցումներ **Երևանի քաղաքապետի հետ:**

26. Փոստային բաժանողային պահարանների տեղադրում **---**

27. Այլ պայմաններ **- Նախագծի կազմը և բավանդակները համապատասխանեցնել 22 քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. «Բնակելի, հասարակական, արևմտադարձային շինությունների և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բավանդակությունը սահմանող կրկնօրենքի համապատասխան մասին» հ.273-Ն հրամանով հաստատված դրույթներին:
- Նախագիծը համաձայնեցման ենթակազմել քաղաքապետին:**



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԱՔԵՌ-ՋԵՅԹՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«07» 05 2014 թ.
N 740432 31/01-1/655

ք. Երևան, Դ.Անհաղթի 11
հեռ. 28-71-17

Երևանի քաղաքապետարանի
Ճարտարապետության և քաղաքաշինության
վարչության պետ Ա.Բասարյանին

Հարգելի պարոն Բասարյան

Ի պատասխան Բանարևո-Ջնյթուն վարչական շրջանի հասցեագրած 30.04.2014թ. հ.14/26500 գրության հայտնում նմ, որ «Հատթանակ» զբոսայգում «Գոլդեն Փելլո» հյուրանոցի հարևանությամբ, շինարարական աշխատանքներն իրականացվում են համաձայն 18.04.2014թ. քաղաքապետարանի հետ համաձայնեցված հ.01/18-23916-370 ճարտարապետական նախագծի:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նշյալ հասցեում որևէ ծառահատման աշխատանք չի իրականացվել:

Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կ. Բաղդյան
28-39-55

743989
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ՔԱՐՏՈՒԳԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
№ 28454 14.05.2014 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՇԽԱՐՀՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

«18» 04 2014 թ. N 01/18-23916-340

Տրված է կառուցապատող

«ԳՈՒԴԵՆ ՓԵԼԼԻՍ» հիւրանոց՝ ՍՊ ընկերություն

- ին

(իրավաբանական անձի անվանումը)

Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջան, Ազատության պող., հ.2/2

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

հիւրանոցային համալիրի 4-րդ մասնաշենքի

(օբյեկտի անվանումը, հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

օբյեկտի

կառուցման

աշխատանքների կատարման համար,

(նոր կառուցման վերակառուցման հիմնանորոգման և այլն)

այդ թվում՝ գլխավոր հատակագծի վրա նշված

(օժտելակ և ոչ հիմնական կառույցների անվանումները)

Օբյեկտի նախագծային փաստաթղթերը մշակվել են

աշխատանքային նախագիծ

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

«Հ. Կոմիտասյան» ՍՊ ընկերության

/լից. հ. 8867/

կողմից,

կապալառուի անվանումը, օրենքով սահմանված դեպքերում լիցենզիայի Nը)

ստացել են՝

14.04.2014թ. հ. 14-177

դրական

պարզ

փորձագիտական

(նշել փորձաքննության տեսակը)

եզրակացություն

«Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերություն /լից. հ. 11528, 13629/

կողմից,

(եզրակացություններ)

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը)

կամ (օրենքով սահմանված դեպքերում)՝

նախագիծը թողալով՝ զրոյանալու կապալառուի կողմից,

(նշել նախագիծը թողալով պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի Nը)

սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

Երևանի քաղաքապետի / 2014թ. համաձայնեցված հ.01/18-05/2-23916- նախագիծ/:

հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

Շինարարական աշխատանքներն իրականացնել

24 ամսվա

ընթացքում:

(նախագծային փաստաթղթերում նշված շինարարության տևողությունը)

Շինարարության վարման մատյանը բաղկացած է 19 էջից, կարված և դրոշմակնքված է

Երևանի քաղաքապետարանի

կողմից:

(թույլտվություն տվող իրավասու մարմնի անվանումը)

Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է սույն կարգի 29-րդ կետով նախատեսված դեպքերում)

(նախագծային աշխատանքների

կողմից:

կապալառուի անվանումը, օրենքով սահմանված դեպքերում լիցենզիայի Nը)

և սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի

հետ:

(նշել մարմնի անվանումը և համաձայնեցման ժամկետը)

Հատուկ պայմաններ՝

1. Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտներին հետ:

2. (լրացվում է սույն կարգի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա

համարների տակ նշված

(նշվում են են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները

շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների)

քանդման՝

(դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն),

սեփականատիրոջը (օգտագործողին))

(նշվում է ՀՀ կառավարության առջև ընդունված ցուցի կարգադրի պետական կոմիտեի տարածքային մարմնի կողմից պետական ցանցման վկայականի N-ը) արված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է. Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

3. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և գույքային աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պայմանների համապատասխան և գործող նորմերի իրականացման պայմանների մասին ՀՀ Երևանի ավագանու 16.03.2012թ. հ. 25-Ն որոշմամբ սահմանված կետով:

(ստորագրությունը)

Կ. Տ.

(իրավաբանական անձի համար)



Երևանի քաղաքապետ
Տ.ՄԱԳԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՏԱԴԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
375010 ԵՐԵՎԱՆ-10, ԲՅՈՒԶԱՆԴԻ 1/3 ԲԵՌ. 54-15-13

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

“ВНЕВЕДОМСТВЕННАЯ ЭКСПЕРТИЗА”

375010 ЕРЕВАН-10, БЮЗАНДА 1/3 ТЕЛ. 54-15-13

№ 14-177

« 14 » 04 2014թ.

ԵՐԵՎԱՆ

«Գոլդեն Փելիս հյուրանոց» ՍՊԸ

Կից ուղարկվում է երևան քաղաքի Բանաքեռ-Ձեյթուն վարչական շրջանի Ազատության պողոտայի թիվ 2/2 հասցեում գտնվող «Գոլդեն Փելիս» հյուրանոցային համալիրի 4-րդ մասնաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ փորձաքննության եզրակացությունը:

Առդիր՝ փորձաքննության եզրակացություն՝ 3 էջից:

Տնօրեն


Վ. Սարգսյան

«ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»


ՓԲԸ

ՊԵՏԱԿԱՆ ԼԻՅԵՆԶԻԱՆԵՐ 11528 և 13629

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Տնօրեն  Վ. Սարգսյան

« 14 » _____ 2014թ.



ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ազատության պողոտայի թիվ 2/2 հասցեում գտնվող «Գոլդեն Փելիս» հյուրանոցային համալիրի 4-րդ մասնաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ

Պատվիրատու
«Գոլդեն Փելիս հյուրանոց» ՍՊԸ

Նախագծող
«Յ. Կոմիտասյան» ՍՊԸ

Նախագծման հիմքը՝ Երևանի քաղաքապետի կողմից տրված թիվ 01/18-07/2-55351-916 առ 05.11.2013թ ճ-7 առաջադրանքը

Ճարտարապետական մաս

Հյուրանոցային համալիրի 4-րդ մասնաշենքը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ազատության պողոտայի թիվ 2/2 հասցեում: Հողատարածքը գտնվում է հասարակական կառուցապատման գոտում: Տրանսպորտային պայմաններն ապահովվում են Ազատության պողոտայով: Տարածքում առկա է քանդման ենթակա լողավազան:

Գլխավոր հատակագծով տարածքում նախատեսված է բացօթյա ավտոկայանատեղի:

Կառույցը յոթհարկանի է, կիսանկուղային հարկով, որը կից է գոյություն ունեցող հյուրանոցային մասնաշենքին, որոնց միջև կապն ապահովվում է միջանցքներով:

Կիսանկուղային հարկում նախատեսված են լողավազան, սաունա, հանդերձարաններ, հանգստի սրահ, սպասասրահ, բուժ. կետ, մերսման սրահ, լվացքատուն, սանհանգույցներ և տեխնիկական սենյակներ:

Առաջինից 6-րդ հարկերում նախատեսված են մախասրսի, սալասարկրղ անձնակազմի սենյակներ, աշխատասենյակներ, տեխնիկական սենյակներ, սանհանգույցներ և հյուրանոցային իամարներ: Յոթերորդ հարկում նախատեսված են մախասրահ, հանդերձարան, սանհանգույցներ, ռեպտորան, խոհանոցային և պահեստային տարածքներ, բեմահարթակ և բացօթյա սրճարան:

Մուտքային հատվածներում տեղադրված են աստիճանավանդակներ և վերելակներ, որոնք շղաճիգ կապ են ապահովում հարկերի միջև: Էվակուացման ուղիների հարգարման համար նախատեսված են հրակայուն նյութեր: Հրդեհի դեպքում վերելակի հորանն ապահովվում է արտաքին օդի ներածման համակարգով:

Որմնախարսիխը երեսպատվում է բազալով, իսկ ճակատները՝ տուֆով:

Տանիքը հարթ է, ներքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Կոնստրուկտորական մաս

Մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը կարկասային է: Կարկասն իրականացվում է շրջանակա-կապային սխեմայով՝ միաձույլ երկաթբետոնից: Լայնական և երկայնական ուղղություններով տեղադրվող շրջանակների համակարգը ստեղծում է տարածակալ կարկաս:

Լայնական շրջանակները եռաթիչք են, տեղադրվում են 7.7, 4 x 8.0 և 4.0 (3.1) մ քայլով: Երկայնական շրջանակները վեցթիչքանի են, նրանց միջև հեռավորությունը կազմում է 7.8, 2.5 և 7.8 (6 և 1.8) մ:

Հիմքերը ներկայացնում են իրենցից միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններ, որոնց լայնական հատվածքի չափերը կազմում են 1200 x 1300 մմ: Հիմքային հեծանքները վերևի և ներքևի գոտիներում ամրանավորվում են 25 և 28 մմ տրամագծի A500c դասի չորսական երկայնական ձողերով: Բացի բազային ամրանից հիմքային հեծանքների վերևի և ներքևի գոտիներում տեղադրվում են 28 մմ տրամագծի A500c դասի լրացուցիչ աշխատող երկայնական ձողեր: Հիմքային հեծանքների բարձրության միջին մասում տեղադրվում են 14 մմ տրամագծի A500c դասի երկայնական կոնստրուկտիվ ձողեր: Լայնական ամրանը չորսճյուղանի է, իրականացվում է 10 մմ տրամագծի A1 դասի ձողերից, տեղադրվում է 100 և 200 մմ քայլով: Ելունայրն տեղամասում հիմքային հեծանքների լայնական հատվածքի չափերը կազմում են 500 x 600 մմ: Հիմքային հեծանքները վերևի և ներքևի գոտիներում ամրանավորվում են 22 մմ տրամագծի A500c դասի չորսական երկայնական ձողերով: Լայնական ամրանը չորսճյուղանի է, իրականացվում է 8 մմ տրամագծի A1 դասի ձողերից, տեղադրվում է 200 մմ քայլով: Հիմքերի բետոնի դասն ընդունված է B 22.5: Հիմքերի տակ նախատեսվում է բետոնե նախապատրաստական շերտի իրականացում՝ B 12.5 դասի բետոնից:

Լողավազանի հատվածում հիմքերը տեղադրվում են ավելի ցածր միջում:

Նախագծին կցված է «Երկրաբան-Ուտիք» ՍՊԸ-ի կողմից տրված տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների մասին եզրակացությունը (Երևան, 2013), համաձայն որի տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝ լիցքային գրունտ, կավային գրունտներ, ավազային գրունտներ, խոշորաբեկորային գրունտներ, կրսաժայռային և ժայռային գրունտներ:

Որպես հիմնատակ առաջարկվում են կիսաժայռային և ժայռային գրունտները: Ստորգետնյա ջրերը մինչև 30 մ խորությունը չեն հայտնաբերվել: Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները տարածքում բացակայում են:

«Չեռտեստ» ՍՊԸ-ի կողմից տարածքում կատարվել են հետազոտություններ սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզի կազմման համար: Միկրոսեյսմերով գրանցված տվյալներով ստացված արդյունքներից տեղամասի գրունտներն ըստ սեյսմիկ հատկությունների դասված են առաջին կարգի:

Կարկասի կանգնակների լայնական հատվածքի չափերը կազմում են 500 x 500, 500 x 700 և 500 x 900 մմ: Կանգնակներն ամրանավորվում են 28, 20 և 20 մմ. տրամագծի A500c դասի երկայնական տարբեր քանակի աշխատող ձողերով: Լայնական ամրանը նախագծված է 8 մմ տրամագծի AI դասի ձողերից: Լայնական ամրանի քայլը հանգույցների մոտ ընդունված է հավասար 100 մմ.-ի, միջին տեղամասերում՝ 200 մմ.-ի: Կանգնակների բետոնի դասն ընդունված է B 22.5:

Կարկասի պարզունակների լայնական հատվածքի չափերը կազմում են 500 x 550 մմ: Պարզունակներն ամրանավորվում են 12, 18, 22, 25 և 28 մմ. տրամագծի A500c դասի աշխատող երկայնական և 8 մմ տրամագծի AI դասի լայնական ձողերից պատրաստվող տարաձևական հյուսված ամրանային կարկասներով: Լայնական ամրանը չորսձյուղանի է, նրա քայլը հանգույցների մոտ ընդունված է հավասար 100 մմ.-ի, թռիչքային տեղամասերում՝ 200 մմ.-ի: Կարկասի պարզունակների բետոնի դասն ընդունված է B 22.5:

Կոշտության դիաֆրագմաներն իրականացվում են միաձույլ երկաթբետոնից, անընդհատ են շենքի բարձրությամբ, ունեն 500 և 300 մմ հաստություն: Դիաֆրագմաներն ամրանավորվում են 12...28 մմ տրամագծի A500c դասի ձողերից պատրաստվող կրկնակի ցանցերով՝ 200 x 200 մմ բջիջների չափերով: Դիաֆրագմաների բետոնի դասն ընդունված է B 22.5:

Ծածկերը նախագծված են միաձույլ երկաթբետոնից, ներկայացնում են իրանցից եզրագծով հենված սալեր, որոնք ունեն 200 մմ հաստություն: Սալերն ամրանավորվում են 12 մմ տրամագծի A500c դասի ձողերից պատրաստվող կրկնակի ցանցերով՝ 200 x 200 մմ բջիջների չափերով: Ծածկերի բետոնի դասն ընդունված է B 22.5:

Պատող պատերը նախագծված են կարկասի լցվածքի ձևով, ունեն 400 մմ հաստություն, իրականացվում են թեթև բետոնե սնամեջ բլկոների ամրանավորված շարվածքից:

Աստիճաններն իրականացվում են միաձույլ երկաթբետոնից, ամրանավորվում են 6, 8 և 16 մմ տրամագծի AI և A500c դասի ձողերով: Աստիճանների բետոնի դասն ընդունված է B 22.5:

Վերելակների հորանների փոստրակների հատակի սալի և պատերի հաստությունը կազմում է 200 մմ, նրանք ամրանավորվում են 12 մմ տրամագծի A500c դասի ձողերից պատրաստվող կրկնակի ցանցերով՝ 200 x 200 մմ բջիջների չափերով:

Ուսումնասիրելով ներկայացված նախագիծը «Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ նշում է՝

- նախագծի վերաբերյալ դիտողություններ չկան,
- նախագծում իրականացված են սեյսմակայուն շինարարության հիմնական պահանջները՝ ստեղծված է կոշտ հանգույցներով տարածական հիմնակմնախթ, ծածկերը ներկայացնում են իրենցից կոշտ սկավառակներ,
- ծածկերի կոշտ սկավառակների առկայությունը կնպաստի հորիզոնական սեյսմիկ բեռնվածքների համեմատական բաշխմանը շենքի ուղղաձիգ կրող տարրերի վրա:

Եզրակացություն՝ **Նախագիծը երեսչավորվում է համաձայնեցման և հաստատման հողահատկացման սահմանները ճշտելուց հետո:**

Փորձագետ, ճարտարապետ		Մ. Մկրտչյան
Փորձագետ, տեխ. գիտ. քեմևածու		Գ. Վարդանյան